ՊԵՂՈՒՄՆԵՐ

ՆՈՐ-ԲԱՅԱԶԻՏԻ ԳԱՒԱՌՈՒՄ

1908 թուին

Ե. ԼԱԼԱՑԵԱՆԻ

Անցեալ երկու տարիների ճանապարհորդութեանս ընթացքում ժամանակի և միջոցների սղութիւնը թոյլ չէին տուել ինձ պեղել մի քանի մեծ դամբաններ, ուստի և ներկայ ճանապարհորդութեանս միջոցին իմ գլխաւոր ուշադրութիւնը կենդրոնացրի այդ մեծ դամբանների վրայ։ Փոքր դամբաններ պեղում էի միայն այն ժամանակ, երբ դեռ ևս փորւում էր մեծ դամբանի հողակոյտը։ Անհրաժեշտ է նկատել, որ մեծ դամբանները, ինչպէս ցոյց տուին թէ անցեալ և թէ այս տարուայ պեղումները, ընդհանրապէս անաղարտ չէին։ Գրեթէ բոլորն էլ որոշ չափով թալանուած էին։ Միքանիսի մէջ ական կար, միւսների մի որևէ պատի միջից մի կամ երկու քար հանուած էին։ Մեծ մասամբ տարուած են զէնքերն ու զարդերը։ Առաւել մեծ վնաս հասցրել է գիւղացիների գութանը՝ շատ անգամ բանալով գերեզմանի մի որևէ մասը։

Ղշլաղ.—Ես պեղումներ կատարեցի նախ դարձեալ Ղըշլաղ գիւղում, ուր դեռ ևս մնում էին էլի բազմաթիւ դամբաններ։ [1])

Այս գիւղի շրջակայքում պեղածս դամբաններից ամենահետաքրքրականները գտնւում են

Ա. Մրթըպի ձորում։ Սա ձգւում է գիւղի արևելահարաւային մասում, որի մի ծայրը հասնում է Նոր-Բայազէտի Մալականի-դարիգլուխը, իսկ միւսը՝ Ղուլալիի Խազախաչի ձորը։ Ցայտնի է, որ այս երկու տեղումն էլ կան դամբաններ, միայն համեմատաբար աւելի փոքր։

Այս ձորակը իւր այժմեան անունն ստացել է այն հանգա-

---

[1]) Այս պեղումների ժամանակ գտնուած իրերը ցուցադրուած են Հայոց Ազգագրական ընկերութեան նորահաստատ թանգարանում։

մանքից, որ մօտիկ անցեալում այստեղ բնակուելիս են եղել Թուրք գնչուներ—մրթըլներ։

Այս ձորի մէջ ձգուում են թէ արևելքից արևմուտք, և թէ հիւսիսից հարաւ դամբաններ։ Առաջնից նկատելի է միայն մի շարք, իսկ երկրորդից երկու։

1. Առաջին շարքի մէջ ամենահետաքրքրականն առաջին դամբանն է, որ գտնուում է շարքի արևելեան ծայրում, հարթութեան վրայ։ Սա բաւական մեծ է, 20 մետր տրամագծով մի շրջանակ ունի՝ կազմուած միջակ քարերով։ Դաշտի մակերևոյթից այդ դամբանն այժմ հազիւ մի մետր բարձր լինէր, որովհետև գիւղացիները քար կրելու նպատակով բաւական քանդած էին։ Գերեզմանի պատերը երևացին հէնց որ պեղեցինք մինչև դաշտի մակերևոյթը։ Գերեզմանն ուղղուած էր հարաւ-արևելքից հիւսիս-արևմուտք և քառանկիւնի էր։ Միջակ և մեծ, անտաշ քարերով էին քաշուած պատերը, որոնք ուղղահայեաց բարձրանում էին, առանց հետզհետէ մօտենալու՝ թաղ կազմելու նպատակով։ Գերեզմանը սովորական մեծ սալերով ծածկուած չէր, այլ միջակ և փոքր քարերով լցուած։ Ութ խորանարդ մետրաչափ քարեր և բաւականաչափ հողհանելուց յետ՝ բացուեց ամբողջ գերեզմանը՝ 6 մետր երկարութեան, երկուսուկէս մետր լայնութեան և 4 մետր խորութեան։ Այս ընդարձակ տարածութեան մէջ, գերեզմանի երկարութեամբ, հիւսիսային պատին կից, երեսը դէպի հարաւ, աջ կողքի վրայ պարկած էր մի մեծ եզան կմախք, որի դանգը վերցրի (№ 549)։ Գլխի մօտ ոչինչ չկար դրուած. իսկ պոչի մօտ երեք կաւէ ձագառաձև խողովակներ (№№ 544—546) և մի խեցի (№ 547), որ շատ նման է այժմեան մեր գիւղերում և քաղաքներում գործածուող խնկանոցին։ Սրա մօտ էլ գտնուում էր մի փոքրիկ, կաւէ արկղիկ, նշխերով զարդարուած։ Թոյլ եմ տալիս ինձ ենթադրելու, որ կովկասեան այս Ապիսի պոչի մօտ դրուած ձագառաձև 3 խողովակները՝ որ յիշեցնում են ատրուշանները՝ դրուել են կրակի վրայ՝ նրան աւելի բորբոքելու նպատակով և սրանց մէջ ածել են խունկ, որ դրուած է եղել այն կաւէ արկղիկի մէջ։ Իսկ խնկանոցանման ամանը երևի դրուել է ձագառաձև խողովակների վրայ՝ խնկի ծուխը իւր մէջ ամփոփելու, և իւր վերայի ծակերով ծխելու։ Սրանցից մի քիչ հեռու, այդ սրբացած եզան ոտների մօտ, հետևապէս և հարաւային պատին կից դրուած էր մի պուլիկ՝ ոչխարի ոսկորներով լի։

2—7. Այս շարքում կային նաև 7 ուրիշ դամբաններ՝ բոլորն էլ բաւական մեծ. սրանց բոլորի էլ վրայի սալքարերն արդէն երևում էին, որովհետև Նոր-Բայազէտցիներն ու Ղըշլեցիները քարեր տանելու նպատակով քանդել էին սրանց վրայի հողակոյտե-

ը։ Թէպէտ և այս դամբանների վրայ ձգուած ահագին սալքարերը բաւականաչափ պաշտպանել էին գերեզմանները, սակայն և այնպէս՝ պատի մի որևէ քարը, կամ սալերի միջև ընկած փոքր քարերը հանելով՝ ներս էին խծկուել և ինչ որ գտնուել էր վերին շերտերում՝ հանել տարել։ Գոնէ մնացածները գիտութեան համար փրկելու յուսով ես պեղեցի բոլորն էլ, նոյն իսկ վեցերորդը, որ ամենամեծն է, ծածկուած ութ մեծ սալքարերով, որոնց միջև եղած փոքր քարերը պարզ երևում է, որ հանուած են։ Սրա գերեզմանի երկարութիւնն է 3 ½ մետր, լայնութիւնը 2,50 մետր, իսկ խորութիւնը՝ 3 մետր։ Սալաքարերի տակ հազիւ քառորդ մետր դատարկ էր, մնացածը լցուած էր հողով։ Դամբանը մօտ 2 մետր տարածութեամբ դատարկելուց յետ՝ երբ հասանք գերեզմանի յատակին և այնտեղ գտանք կոտրատուած ամաններ և փշրուած ոսկորներ՝ համոզուեցինք, որ ոչ թէ միայն վերին շերտերն են խառնուած, այլ և ամբողջովին պեղուած է, ուստի և դադարցրինք աշխատանքները։

8. Փոքր ի շատէ անեղծ մնացած դամբաններից առաջնի տրամագիծն է 12 մետր, բարձրութիւնը դաշտի մակերևոյթից 2 մետր։ Շուրջանակի պատած է մեծ մեծ քարերով։ Գերեզմանի ուղղութիւնը նոյնն է՝ հարաւ—արևելքից հիւսիս արևմուտք։ Երկարութիւնն է 3,50 մետր, լայնութիւնը 1,50 մետր և խորութիւնը 2 մետր։ Զորս պատերն էլ, որ դասաւորուած են քառանկիւնի ձևով, անտաշ մեծ մեծ քարերից են շինուած և ծածկուած երեք մեծ սալքարերով։

Գերեզմանի մէջ տեղում, հիւսիսից հարաւ պառկած էր մի երկարագլուխ կմախք (№ Ա), որի մէջքին կար մի բրոնզէ ապարանջան։ Այս կմախքի մօտից գտնուեց երկու բրոնզէ բաղանման պանդըլոկ, (№ 542), 2 բրոնզէ ապարանջան, երկու վանակատի նետ (№ № 63 և 64) և մի բրոնզէ կոճակ։

Այս կմախքից դէպի արևմուտք, երկու պատին կից արևելքից արևմուտք պարկած էին երեքական կմախքներ, որոնց մօտ գտնուում էին կոտրատուած պուլիկներ։

Նոյն կմախքից դէպի արևելք էլ կար ուրիշ երկու երկարագլուխ կմախք՝ արևելքից արևմուտք ուղղուած, որոնցից առաջինը աջ կողքի, իսկ երկրորդը մէջքի վրայ էր պառկած։ Վերջինիս մօտ գտնուեց մի պուլիկ։

9. Նոյն շարքի երկրորդ դամբանը նոյնպէս շուրջանակի պատած է մեծ մեծ քարերով և 15 մետր տրամագիծ ունի։ Հողակոյտի բարձրութիւնը այժմ միայն 2 մետր է, մինչդեռ, գիւղացիների ասելով, առաջ շատ բարձր է եղել, իրենք գիւղացիները

քանդել են քարերը տանելու համար։ Գերեզմանի ուղղութիւնը հարաւ արևելքից հիւսիս արևմուտք է։ Անտաշ քարերով շինուած չորս պատեր՝ բարձրանալով հետզհետէ մօտենում են իրար, և կրում չորս մեծ սալաքարեր, որոնց երկարութիւնը 2,50 մետր է, լայնութիւնը 1—1,70 մետր, հաստութիւնը 0,50—0,80 մետր։ Գերեզմանի երկարութիւնն է 5,30 մետր, լայնութիւնը 2,80 մետր, իսկ խորութիւնը՝ 3,20 մետր։ Գերեզմանի հարաւ-արևելեան ծայրում բացուեց մի ձիու կմախք, հարաւից հիւսիս, մէջքի վրայ ընկած, գլուխը առաջի ոտներին կից, երևի այդ տեղից կապել էին, որովհետև հէնց այդ տեղում կար երկաթէ մի կապանք (№ № 438 և 439)։ Ձիու երախումն էլ կար երկաթէ մի մեծ սանձ (№ 437)։ Կմախքի վրայից գտնուեց ձիու բրոնզէ զարդարանքներ (№ № 443—465). և բրոնզէ հինգ նետ (№ № 70—75)։ Գերեզմանի-հիւսիս-արևմտեան մասում, ձիու կմախքից փոքր ինչ հեռու, բացուեց մի քանի երկարագլուխ կմախքներ՝ ոսկորները անկանոն ձգուած, որոնց միջից գտնուեց միայն մի գեղեցիկ, բրոնզէ մեծ դաշոյն։ Այս գերեզմանի թալանուած լինելը հաստատուեց նաև նրանով, որ արևմտեան կողմի պատի մէջ մի քար հանուած էր։

10. Նոյն շարքի երրորդ դամբանի տրամագիծն է 16,50 մետր. բարձրութիւնը՝ 2 մետր։ Նոյնպէս շրջապատուած է մեծ մեծ քարերով և հողաթմբի մեծագոյն մասը հարթուած է։ Գերեզմանը պատած է անտաշ քարերի չորս պատերով և ծածկուած էր չորս մեծ սալքարերով։ Երկարութիւնն է 7 մետր, լայնութիւնը 2 մետր և խորութիւնը 3 մետր։

Դժբախտաբար այս ահագին գերեզմանն էլ անեղծ չէր, այստեղ ևս բոլոր ոսկորները միմեանց խառնուած, ամանները փշրուած էին։ Գտնուեց մի կղաքիսի կմախք (№ 890), կոտրատուած երկարագլուխ դանգեր, բրոնզէ նետեր և գօտու բրոնզէ զարդարանքներ։

11. Նոյն վիճակին էր ենթարկուած նաև չորրորդ դամբանը, որ իւր մեծութեամբ և տեսքով միանգամայն նման էր առաջիններին։ Այստեղ ևս բաւականաչափ, խառնն ի խուռն թափուած մարդկային կմախքների հետ գտնուեց մի բրոնզէ կոճակ, մի ոսկրէ օղ, երկու բրոնզէ նետ և երկու պուլիկ։

12. Հինգերորդ դամբանը հիմնովին թալանուած էր։

13. Այս շարքի վերջին, ամենամեծ դամբանից հազիւ 30 մետր դէպի հարաւ՝ առանձին գտնուում է մի համեմատաբար փոքր դամբան, որի տրամագիծն է 9 մետր, բարձրութիւնը 2 մետր։ Գերեզմանը ուղղուած է հիւսիսից հարաւ, երկարութիւնն է 3 մետր, լայնութիւնը 1 մետր, և խորութիւնը 1,50 մետր։

Անտաշ քարերով չորս պատ էր քաշուած և երկու սալքարերով ծածկուած։ Գերեզմանի մէջ հիւսիսից հարաւ, կողք կողքի և ներսները միմեանց դարձրած պարկած էին մի երկարագլուխ տղամարդու և նոյնպիսի մի կնոջ կմախք։ Տղամարդի մօտից դուրս եկան երկաթէ մի փոքրիկ դաշոյն և մի նիզակ (№ 56), իսկ կնոջ մօտից բրոնզէ մի ապարանջան, մի մախաթ, մի մատանի և ուլունքներ։ Կմախքների ոտների մօտ դրուած էին մի մի պուլիկ։

Մրթըլի ձորի դամբանների երկրորդ խումբը գտնուում է առաջին շարքից դէպի հիւսիս, մօտ 100 մետր հեռու։ Այս խումբը բաղկացած է երեք շարքից, որոնք ձգուում են հիւսիսից հարաւ, և միմեանցից մօտ 15 մետր հեռու են։ Իւրաքանչիւր շարքում ես նկատեցի 6—7 դամբան։ Դժբաղդաբար այս խմբի դամբաններն էլ անեղծ չեն, որովհետև սրանց քարերը ես տարուած են Նոր-Բայազէտ՝ շինութիւնների համար։

14—15. Այս խմբի առաջին շարքի մէջ ամենից ուշագրաւը վերջի, ամենահիւսիսային, դամբանն է։ Այս դամբանի երկու կողքից, մօտաւորապէս 30 մետր հեռաւորութեամբ, արևելքից արևմուտք նկատելի են ցից-ցից կանգնեցրած հինաւուրց, մեծ քարերի մի մի շարք, որոնք ձգուում են մօտ մի կիլոմետր տարածութեամբ։ Այս դամբանի տրամագիծը 30 մետր է, իսկ բարձրութիւնը՝ այժմ միայն 2 մետր, շուրջը եղել են մեծ-մեծ քարեր, որոնցից միայն մի քանիսն են այժմ մնացել։ Բանուորներս պատմում էին, որ սրա հողակոյտը շատ բարձր է եղել, սակայն քար հանելու համար քանդել են, և այդ միջոցին գտել պուլիկներ, ուլունք, բրոնզէ իրեր։ Թէպէտ և երևում էր, որ բաւականաչափ քանդուած էր, բայց որովհետև հողակոյտը այնուամենայնիւ դաշտի մակերևոյթից դեռ էլի երկու մետր բարձր էր, ուստի ենթադրեցի, որ գերեզմանը բացուած չի կարող լինել, և այս պատճառով էլ՝ խաչաձև կտրել տուի։ Դժբաղդաբար 2,50 մետր խորութեան վրայ բացուեց սալատակ։ Մեծ դժուարութեամբ կարողացանք այդ սալատակից մի քանի շերտ պրծեցընել, սակայն բաւական հաստ լինելով, չկարողացանք ծակել։ Այս պատճառով հողակոյտի մեծ մեծ քարերով կազմած շրջանից դուրս՝ մօտ 3 մետր հեռաւորութեամբ շարունակել տուի խաչաձև կտրուածքը, սակայն դարձեալ միևնոյն սալատակը բացուեց։ Այս անգամ 25 մետր հեռու, դէպի արևելք գտնուող փոքրիկ դամբանը բանալ տուի, որի մէջ նոյն սալատակին չպատահեցայ։ Ո՛չ քաղաքում և ո՛չ մօտակայ գիւղերում չգտնելով վառօդով քար կոտրողներ՝ ես ամբողջ մի շաբաթուայ աշխատանքից յետ ստի-

պուեցայ դադարեցնել աշխատանքները՝ մանաւանդ որ բանուորները պնդում էին, թէ այդ սալայատակը բնական է։ Կարող էր գերեզմանը հէնց այդ հողակոյտի մէջ ամփոփուած լինել, սակայն այս դէպքում մենք պէտք է հանդիպէինք գերեզմանի պատերին, մանաւանդ որ բացի խաչաձև կտրուածքից, զանազան կողմերից դարձեալ փորեցինք։ Ցանկալի էր, որ վառօդով կոտրատուէր այդ սալայատակը՝ խնդիրը վերջնականապէս պարզելու համար։ Արտաքին նշանները ոչ մի կասկած թոյլ չեն տալիս այդ հողակոյտը դամբան համարելու։

16. Այս դամբանից մի քիչ փոքր, մի ուրիշ դամբան գտնուում էր սրանից հարաւ, երկրորդ շարքի դրեթէ կենտրոնում, սակայն սրա հողակոյտը ոչ միայն ամբողջովին քանդուած էր, այլև դաշտի մակերևոյթից ցած էր իջած, այս պատճառով և ես ենթադրեցի, որ պեղուած է։

17. Սրա մօտի դամբանը իմ ուշադրութիւնը գրաւեց նրանով, որ թէպէտ հողակոյտը քանդուած էր և միայն կէս մետր բարձրութեամբ էր մնացել, սակայն սրա շուրջը պատած քարերը, որ մանր են և դեռ ևս հանուած չեն, ոչ թէ շրջանաձև են շարուած, այլ քառակուսի։ Եւ որովհետև այս նշանը հազիւ է պատահում՝ ուստի ես պեղել տուի դամբանը։ Կէս մետրաչափ պեղելուց յետոյ բացուեցան դամբանի պատերը, առանց մեծ սալքարերի։ Միայն մի մեծ սալաքար ընկած էր մէջ տեղում։ Գերեզմանը քառանկիւնի էր, հիւսիսից հարաւ ուղղուած, 6 մետր երկարութեան, 2,50 մետր լայնութեան և չորս մետր խորութեան։ Պատերն անտաշ քարից էին շինուած և ուղղահայեաց էին, առանց հետզհետէ միմեանց մօտենալու։ Ամբողջ գերեզմանը լցուած էր հողով և մեծ ու փոքր քարերով։ Դուրս եկան կոտրատուած պուլիկների, և մի քանի ոսկորների կտորներ և ուրիշ ոչինչ։ Երևի հիմովին պեղուած էր։

18—20. Միւս դամբաններից, որ համեմատաբար փոքր էին, պեղեցի երեքը։ Սրանցից մինի տրամագիծն էր 10 մետր, բարձրութիւնը 1 մետր։ Գերեզմանն ուղղուած էր հիւսիսից հարաւ, շրջապատուած չորս պատով ու ծածկուած երկու մեծ և մի փոքր սալքարով։ Երկարութիւնն էր 2,50 մետր, լայնութիւնը 1 մետր. և խորութիւնը 1,25 մետր։ Գերեզմանի մէջ տեղում, հարաւից հիւսիս, մէջքի վրայ պարկած էր մի երկարագլուխ կմախք, որի գլխի մօտ պրպրված էին մի մեծ և մի փոքր, մարդկային կմախք, մօտերը մի կարկատած քասա և մի պուլիկ դրած։

Միւս երկու դամբանների կմախքները կոտրատուած և միմեանց վրայ ձգուած էին, պարզ է, որ բացուած էին։

Բ. Մալականի-դարի գլխի դամբանները.—21—23. Մրթըպի-ձորի արևմտեան կողմում, Նոր-Բայազէտի սահմանի Մալականի դարի-գլուխ կոչուած տեղում պեղեցի երեք դամբան, որոնք տեղաւորուած էին մի շարքով, հիւսիսից հարաւ։ Սրանցից երկուսն արդէն բացուած երևացին, իսկ միջինը բոլորովին անեղծ։ Սրա տրամագիծը 5 մետր էր. բարձրութիւնը հազիւ կէս մետր։ Շուրջանակի պատած էր քարերով։ Գերեզմանի ուղղութիւնն էր արևելքից արևմուտք, ունէր անտաշ քարի չորս պատ և ծածկուած էր երեք սալ քարերով։ Երկարութիւնն էր 2,50 մետր, լայնութիւնը 1,50 մետր և խորութիւնը երկու մետր։ Գերեզմանը ամբողջապէս լցուած էր հողով և կաւային մի շերտով բաժանուած երկու մասի, վերին և ներքին։ Ներքին մասում միմեանց մօտ, կողք կողքի և երեսները միմեանց դարձրած հիւսիսից հարաւ պառկած էին երկարագլուխ մի տղամարդու և մի կնոջ կմախք։ Տղամարդու մօտից գտնուեց բրոնզէ մի դաշոյն, և մի գօտի, իսկ կնոջ մօտից բաւականաչափ ուլունքներ, բրոնզէ ապարանջան և մատանիներ, ինչպէս և մի մախաթ։

Գերեզմանի վերին մասում պըպըղած ձևով կային հինգ մարդկային, և մի դորշուկի կմախք, ինչպէս և մի ոչխարի գլուխ։ Պարզ է, որ գերեզմանի ներքին մասում պառկածները տէրերը, իսկ վերին մասում՝ նրանց ծառաներն ու կենդանիներն են եղած։

Գ. Աղբրի-ձորի-գլխի դամբաններ.—Դամբանների այս խումբը, որ գտնուում է Ղըշլաղ գիւղի արևելեան կողմը, միակ աղբրի ձորի գլխին, շատ մօտ է այն դամբաններին, որ ես պեղեցի 1905 թուին և որոնց մէջ նշանաւոր էր 30 մարդկային, 2 ձիու և այլ կմախքներ պարունակող դամբանը։

Դամբանների այս նեկրոպոլը բաղկացած է միայն հինգ դամբաններից, որոնք կուտակուած են միմեանց մօտ. մի դամբան էլ ընկած է սրանցից մօտ 20 մետր հեռու, դէպի արևելահարաւ։

24. Առաջին դամբանի տրամագիծն է 7 մետր. բարձրութիւնը կէս մետր. գերեզմանը ուղղուած է հիւսիսից հարաւ, պատած էր անտաշ քարերի չորս պատերով և ծածկուած սալքարերով։ Երկարութիւնն էր 3 մետր, լայնութիւնը և խորութիւնը մէկուկէսական մետր։

Գերեզմանի մէջ տեղում, հիւսիսից հարաւ պառկած էին երկարագլուխ մի տղամարդի և մի կնոջ կմախք, կողք կողքի և երեսները միմեանց դարձրած։ Տղամարդու մօտից գտնուեցին մի բրոնզէ դաշոյն (№ 40), մի քարէ լեսան, (№ 428) իսկ կնոջ մօ-

տից՝ բրոնզէ հինգ ապարանջան, մի զոյգ օղ, երկու ֆիբուլ, և բաւականաչափ ուլունքներ։ Երկու կմախքների կողքերին դրուած էին մի-մի ոչխարի գլուխ և շարուած 32 փոքր և մեծ պուլիկներ։ Արևելեան և արևմտեան պատերին կից կային հընգական, իսկ հիւսիսայինին չորս պրպրզած կմախքներ։ Հարաւային պատի մօտն էլ երևեցաւ մի երեխայի կմախք՝ նոյնպէս պրպրզած և առջևում մի կաւէ ճրագ դրուած (№ 891)։

25. Բ. Դամբանի տրամագիծն է 6 մետր, բարձրութիւնը կէս մետր։ Գերեզմանի երկարութիւնն է 2,10 մետր, լայնութիւնը 1 մետր և խորութիւնը 1,20 մետր։ Գերեզմանն ուղղուած է հիւսիսից հարաւ, պատած անտաշ քարերի չորս պատերով և ծածկուած էր 3 սալքարով։

Գերեզմանի մէջ տեղում, հիւսիսից հարաւ պառկած էին կողք կողքի, երեսները միմեանց դարձրած մի տղամարդու և մի կնոջ կմախք։ Տղամարդու գանգին կար բրոնզէ մի վարսակալ, (№ 113) թևերին 9 և ոտներին 2 բրոնզէ ապարանջան։ Կնոջ աջ ձեռին կար 3 բրոնզէ ապարանջան, և ծղիկի երկարութեամբ ձգւում էր մի բրոնզէ շղթայ, որի մէջ տեղից կախուած էր դարձեալ բրոնզէ մի բաղանման պանդըլոկ (№ 535)։ Մէջքին կար մի բրոնզէ գօտի (№ 129)։ Ձախ ձեռի ծղիկի վրայ ևս կար բրոնզէ նոյնպիսի շղթայ, սակայն առանց պանդըլոկի։ Կրծքի վրայ մի գեղեցիկ ֆիբուլ (№ 102), և ականջին մի խխունջէ օղ (№ 117)։ Այս կնոջ կմախքի մօտ կային երկու երեխաների կմախքներ, որոնցից մինի ծնօտներին դեռ ևս ատամներ չէին դուրս եկել։ Միւս երեխայի վզին կար բրոնզէ մանեակ (№ 485)։ Այս երեխաների ոտների մօտ դրուած էր մի կաւէ ճրագ և մի պուլիկ. կմախքների շուրջը դրուած էին 7 պուլիկ և մի քասա։ Այս կմախքների երեսին 10 սանտիմետր հաստութեամբ կաւ էր քաշած, որի վրայ անկանոն կերպով ընկած էին հինգ երկարագլուխ գանգ և սրանց կմախքները։ Կմախքներից մէկը ընկած էր ուղիղ գանգի վրայ, ոտները վերև ցցուած և կոտրատուած։ Այս կմախքների մօտից գտնուեց մի եղջիւրէ հերոն (№ 29)։

26. Գ. դամբանի տրամագիծն էր 12 մետր, բարձրութիւնը կէս մետր. գերեզմանը ուղղուած էր ոչ թէ մնացած չորսի պէս հիւսիսից հարաւ, այլ արևելքից արևմուտք, երևի տեղի անյարմարութեան պատճառով, որովհետև այս հինգ դամբանը ոչ թէ մի շարքով էին տեղաւորուած, այլ գրեթէ շրջանաձև։ Գերեզմանի երկարութիւնն էր 2,50 մետր, լայնութիւնը 1 մետր և խորութիւնը մէկուկէս մետր։

Այս գերեզմանը բաժանուած էր երկու յարկի 10 սանտի-

մետր հաստութեան հողի շերտով։ Ներքին յարկում, հիւսիսից հարաւ, ձախ կողքի վրայ, երեսը դէպի արևմուտք դարձրած պառկած էր մի երկարագլուխ կանացի կմախք (№ 571), որի ականջի մօտ կար մի դեղեցիկ, բրոնզէ օղ (№ 588), և թևին՝ բրոնզէ մի ապարանջան։ Այս կնոջ հարաւային կողմում պառկած էր մի երեխայի կմախք (№ 570)։ Վերին յարկում, գերեզմանի գրեթէ կենտրոնում պպզած էին երկու երկարագլուխ կմախքներ, երեսները դէպի արևմուտք դարձրած։ Սրանցից մինի մօտից գտնուեց բրոնզէ մի բաղանման պանդըլոկ (№ 525) և 10 կաւէ ամաններ, ինչպէս նաև մի ոչխարի գլուխ (№ 13)։ Այս կմախքների հարաւային կողմում էլ կար մի պըպըզած երեխայի կըմախք, մօտը երկու կաւէ աման, որոնցից մինը միանգամայն նըման է այժմեան կաթնամանին։

Այս կմախքներից փոքր ինչ հեռու, գերեզմանի արևմտեան անկիւնում պըպըզած էին երկու ուրիշ երկարագլուխ կմաքներ, որոնցից մինի մօտ գտնուեց մի երկաթէ նիզակ (№ 50)։

27. Դ. դամբանի տրամագիծն էր 6 մետր, բարձրութիւնը կէս մետր։ Գերեզմանը, որ ուղղուած էր հիւսիսից հարաւ և պատած անտաշ քարերի չորս պատով, ծածկուած էր 3 մեծ սալքարերով, երկարութիւնն էր 2,10 մետր, լայնութիւնը 1,10 մետր և խորութիւնը 1 մետր։

Այս գերեզմանի հիւսիսային կողմը, մօտ մի մետրաչափ տարածութեան վրայ բացուեց մի փայտէ արդէն փթած դագաղ՝ մէջը մի երեխայի կմախք, արևմուտքից արևելք պառկեցրած։ Պարզ էր, որ այս կռապաշտական դամբանի մէջ քրիստոնէութեան միջոցին ուրիշ ննջեցեալ էր թաղուած։ Դագաղի շուրջը, առաւելապէս գերեզմանի անկիւններում և պատերին կից՝ անկանոն կերպով ձգուած էին երկարագլուխ դանգիր և կմախքի կոտրատուած ոսկորներ, որոնցից մի քանիսը, սակայն, մնացել էին իրենց նախկին, պըպըզած դրութեամբ։ Այս ոսկորների միջից գտնուեց բրոնզէ մի դաշոյն, երկու մեծ և երկու երեխայի ապարանջան, երկու ֆիբուլ (№ № 481 և 104), մի մատանի, և մի դեղեցիկ, քարէ ականջի գինդ (№ 889)։ Դագաղի շուրջն անեղծ մընացել էին կաւէ 5 ամաններ։

Գերեզմանի հարաւային մասը՝ երկու սալերի տակ մնացել էր անձեռնմխելի, և այս տեղ պառկած էին հիւսիսից հարաւ, երեսները միմեանց դարձրած մի տղամարդու և մի կնոջ կմախքներ։ Իսկ վերջինիս մօտ՝ երկու երեխաների կմախքներ՝ պըպըզած ձևով, ոտների մօտ մի կաւէ ճրագ (№ 892) և մի պուլիկ դրուած։ Տղամարդի մօտ գտնուեց մի գորշուկի կմախք (№ 893), մի դա-

ւազանի բրոնզէ գլուխ (№ 434), դաշոյնի պատեան, բրոնզէ մի զոյգ ապարանջան և բաւականաչափ ուլունք։

28. Հինգերորդ կամ վերջին դամբանի տրամագիծն էր 6 մետր, բարձրութիւնը կէս մետր. գերեզմանը միևնոյն ձևի էր, հիւսիսից հարաւ, անտաշ քարերով չորս պատ քաշած և 3 մեծ սալերով ծածկուած։ Երկարութիւնն էր 2 մետր, լայնութիւնը 0,90 մետր և խորութիւնը 1 մետր։ Շուրջանակի պատած էր մանր քարերով։

Գերեզմանի մէջ տեղում, հիւսիսից հարաւ, աջ կողքին պառկած էր մի երկարագլուխ մարդու կմախք, (№ 563) որի գոտկատեղից գտնուեց մի կանթով, խաչաձև կտրուած բրոնզէ շրջանակ և մի քարէ սրոց (№ 427), ծղիկի վրայից բրոնզէ խողովակ և ութը ապարանջան, բրոնզէ մի գաւազանի կոթ և մի դաշոյնի պատեան։ Առջևում շարուած էին երեք պուլիկ և երկու քասա։

Այս պարկած կմախքից փոքր ինչ հեռու, հիւսիս արևելեան անկիւնում, կար մի կնոջ և մի երեխայի պլպլզած կմախք, մի բրոնզէ ապարանջանով, իսկ հիւսիս արևմտեան անկիւնում միայն մի պլպլզած երեխայի կմախք, երեք բրոնզէ ապարանջաններով և առջևում մի կաւէ ճրագ։

Պարկած կմախքի առջև, մասամբ կաւէ ամանների վրայ, մասամբ էլ արևելեան պատին կից, գլխի վայր ընկած կային չորս երկարագլուխ կմախքներ, գանգերը ներքևում, իսկ ոտները վերև ցցուած։ Այս կմախքներից մինի վզին գտնուեց մի բրոնզէ մանեակ (№ 109), մէջքին բրոնզէ մի կոտրատուած, նեղ գօտի, երկու հատ կանթաւոր և խաչաձև կտրուած բրոնզէ շրջանակ և ծղիկի վրայ նոյնպէս բրոնզէ երկու ապարանջան և երկու խողովակ։ Միւս կմախքի մօտից ոտի բրոնզէ մի ապարանջան։

Գերեզմանի հարաւ արևմտեան անկիւնումն էլ երևաց տաւարի ոսկորներ, որոնց վրայ գլխի վայր ընկած երկու կմախք։ Վերջիններս ունէին բրոնզէ մի-մի գօտի (№ 128), մինը բրոնզէ մանեակ (№ 190), իսկ միւսը՝ մի նոյնպիսի ապարանջան։

Կարելի է ենթադրել՝ որ պարկած կմախքը գերեզմանի տէրն է, մի իշխանաւոր անձնաւորութիւն, հիւսիս արևելեան և հիւսիս արևմտեան անկիւններում պպզածները՝ նրա կինն ու երեխաները, միւս գլխի վայր ընկած վեց կմախքները՝ նրա սիրելիները կամ ծառաները։

28. Այս խմբից հազիւ քսան մետր հեռու գտնուող վեցերորդ դամբանի տրամագիծն էր 7 մետր, բարձրութիւնը 0,40 մետր։ Սա ևս շուրջանակի պատած է քարերով։ Գերեզմանը ուղղուած է հարաւ-արևելքից հիւսիս արևմուտք. անտաշ քարով չորս

պատեր են քաշուած, որոնք հետզհետէ մօտենում էին միմեանց և կրում էին իրենց վրայ 4 սալքարեր։ Դերեզմանի երկարութիւնն է 2 մետր, լայնութիւնը 1,20 մետր, խորութիւնը 1 մետր։

Դերեզմանի մէջ տեղում, հիւսիսից հարաւ, ձախ կողքի վրայ պառկած էր մի կմախք, ձեռքերը կրծքին ուղիղ դրած, ոտները կռացրած։ Սրա կմախքը ամբողջովին վերցրի (№ I)։ Սրա բերնի հանդէպ դրուած էր գառան մի ծնոտ և մի քանի ոսկորներ, ոտների մօտ տաւարի երկու ոտ։ Պարզ է, որ կամ աղքատութիւնից ստիպուած և կամ ուրիշ պատճառներով այս կերակրները կաւէ ամաններով չէին դրուել։ Այս պառկած կմախքի յետևում, այն է դերեզմանի արևմտեան կողմում, խառնի խուռն, գլխները ներքև և մարմինը վերև ընկած էին երկու երեխայի և մի կնոջ կմախքներ։ Երեխաների գանգերը ջարդուած էին, իսկ ծնոտները ամբողջ։ Կնոջ գանգը (№ 461) ամբողջ էր մնացած։ Դերեզմանում ոչ մի պուլիկ կամ իր չգտնուեց։

Գ. Զայիրներում, Սաքէի-աղբիւրում եւ Զոպան-Վալիում կատարածս պեղումները։ Ղըշլեցիների արտերի մէջ ցրուած բազմաթիւ դամբաններից շատ շատերի հողաթմբերն արդէն հարթուած են, քարերը տարուած և տեղը ցանուած։ Բաւականաչափ մեծերը միայն կարողացել են ընդդիմադրել գութանի հարուածներին, սակայն բոլորովին անեղծ չեն մնացել։

30—57. Ցանկանալով այսպիսի դամբանների մէջ դեռ ևս մնացած հնագիտական իրերը գոնէ ազատել վերջնական կորուստից, ես Զայիրներում, Սաքէի-աղբիւրի ծորում եւ Զոպան-Վալիի հովտում պեղել տուի 28 դամբան։ Սրանք բոլորն էլ պատկանում էին բրոնզի դարին։ Անեղծ մնացած կմախքները պըպըզած ձևով էին դրուած։ Պատահում էին նաև հիւսիսից հարաւ պառկածներ։ Դերեզմաններից շատերի ուղղութիւնը հիւսիսից հարաւ էր, պատահում էին նաև արևելքից արևմուտք։ Գտնուած իրերից ամենից ուշագրաւը մի բրոնզէ հաստ մատանի է, որի վրայ կայ մի ուռուցիկ պատկեր (№ 140)։ Այն դամբանը, որից դուրս եկաւ այս նշանաւոր մատանին, շատ մեծ էր, արևելքից արևմուտք ուղղուած, և չորս մեծ սալքարերով պատած։ Սալքարերի միջև եղած բացուածքով մտել էին և ամեն ինչ տարել, մնացել էր միայն այդ մատանին և կոտրատուած գանգեր, ոսկորներ ու ամաններ։ Միւս իրերից յիշատակութեան արժանի են՝ երկու երկաթէ դաշոյն (№№ 61 և 62) և մի բրոնզէ մախաթ (№ 403)։

Ատիեամանի կամ Ղարանլուղի «Զոջ Կոլոն».—Յուլիսի 9-ին Ղըշլաղից ես գնացի Ղարանլըղ գիւղը յատկապէս պեղելու «Զոջ Կո-

լոնը», որ 1906 թ. նկատել էի, սակայն մեծութեան պատճառով չէի կարողացել պեղել։

58. Այս դամբանը գտնուում է Նոր-Բայազէտ գիւղից 32 կիլոմետր դէպի հարաւ արևելք, Աոիեաման և Ղարանլըղ՝ կամ Նախկին Կոթ ու Մեծ Կղնուտ գիւղերի սահմանագլխում կամ մէջ տեղում, իւրաքանչիւրից մէկուկէս, իսկ ծովից մօտ մի կիլոմետր հեռու։ Դամբանը կլոր է, 49,5 մետր տրամագծով, բարձրութիւնը այժմ՝ 3 մետր է։ Դամբանը անեղծ չէր մնացել. տասն տարուց ի վեր առաւելապէս Ղարանլըղցիները մեծ քանակութեամբ քարեր են հանել տարել այս տեղից։ Գիւղական դպրոցի շէնքի կառուցանողն ասում էր՝ թէ ինքը առնուազը 1000 սայլ քար տարած կը լինի այստեղից դպրոցի շէնքի վրայ գործածելու։ Տերունիների ասելով՝ իրենց այս երկիրն եկած ժամանակ այս դամբանը դարձեալ հողով ծածկուած չէր, այլ քարերի մի մեծ կարկառ էր ներկայացնում, գագաթը տեղ-տեղ խոր ընկած, տեղ տեղ էլ՝ բարձրացած։ Այժմ էլ նոյն քարերի կարկառն է, միայն աւելի տձևացած, որովհետև գրեթէ բոլոր կողմերից քարեր են հանել տարել և փոսեր գոյացրել։ Շուրջը մեծ-մեծ քարերով չէ պատած և ծերունիներն էլ ասում են, թէ իրենք այդպիսի քարեր չեն տեսել։ Պեղումներից երևաց, որ մօտ 3 մետր ծածկուած է լճի, գետի և ջրջակայ լեռների քարերով, միմեանց վերայ անկանոն կերպով ածած, առանց հողային շերտի։ Յետոյ բացուում է երկրի մակերևոյթը՝ մօտ մի մետր հաստութեան սևահողով, որին յաջորդում է աւազի շերտը։

Միջոցների սղութեան և մասամբ բանուորներ քիչ լինելու պատճառով ես սկսեցի 2 մետր լայնութեամբ կտրել դամբանը արևմուտքից դէպի արևելք։ Հինգ մետր խորութեան մէջ ջուր դուրս եկաւ։ Ենթադրելով՝ որ լճի մակերևոյթն այժմ բարձրացած լինելով՝ գերեզմանը կարող է ջրի տակ անցած լինել՝ մի մետրաչափ էլ ջրի մէջ փորել տուի։ Երբ հասանք դամբանի մէջ տեղին՝ 3 մետր խորութեան մէջ բացուեցան երեք սալքարեր, անկանոն կերպով ձգուած, որոնցից վերջինը մեր կտրած շերտից դէպի հիւսիս էր ուղղուած. ուստի սկսեցինք հիւսիսային կողմը կտրել։ Երբ հասանք նոյն խորութեան, 3 մետր երկարութեամբ և նոյնչափ լայնութեամբ, բացուեց հողային շերտ, որի միջից գտնուեց մի քարէ մեծ ուլունք, և ոսկորների մանրունք։ Բանուորներից մինը՝ որ հէնց այս տեղը ինքը փորել էր մեծ քարեր հանելու նպատակով, ասաց թէ ինքը հանելիս գտել է մի բրոնզէ ապարանջան և մի փոքրիկ պուլիկ։

Մօտ մի մետրաչափ ևս այդ սևահողը փորելուց յետոյ՝ բա-

ցուեցան չորս շարք սալքարեր, միմեանց վրայ այնպէս դրուած՝ որ հետզհետէ միանալով՝ թաղ էին կազմում։ Իսկոյն հասկացանք, որ մեր առաջին անգամ դտած երեք սալքարերը, որ սրանցից մի քիչ հեռու էին ընկած, այստեղ բացուող գերեզմանի երեսի քարերն էին, որոնք հանդչելիս են եղել թաղ կազմող այս չորս շարք, քառանկիւնաձև շարուած սալքարերի վրայ։ Շարունակեցինք պեղել. դուրս եկաւ բարակ, գրեթէ մաղուած հող, միայն տիղմ դարձած։ Այս տիղմը մի մետր խորութեամբ, 2,30 մետր լայնութեամբ և նոյնքան երկարութեամբ մաքրելուց յետոյ բացուեց մի երկարագլուխ կմախք, մէջքի վրայ պառկած, հարաւից հիւսիս։ Գլուխը ջարդուած էր և ստորին ծնոտը մի կողմ ձգուած։ Ձախ կողքին մի սալքար էր ընկած, երբ վերցրինք՝ կմախքի ձախ ձեռքում դտանք մի բրոնզէ գեղեցիկ տապար (№ 436), կողքին երկու ջարդուած պուլիկ։ Հանուած տիղմը չորացնելուց յետոյ լաւ քննեցինք և միջից միայն մի քանի ուլունք դտանք։

59—66. Այս դամբանի պեղման ընթացքում, սրա մօտ, Աղիեսման գիւղի շրջակայքում պեղեցի եօթ դամբան, որոնք առանձին նկարագրութեան արժանի չեն։

Օրդակլուի պեղումները.— Հոկտեմբերի 3—5 ես պեղումներ կատարեցի Օրդակլուում, որ գետեղուած է Սևանայ լճի արևմտեան ափին, Նոր-Բայազէտից 13 կիլ. հեռու։ Ինչպէս յայտնի է, այս գիւղում, լճի անմիջապէս ափին, կայ մի սեպաձև արձանագրութիւն, ուր ասուած է, որ Արգիշտի, Բիանա երկրի թագաւորը, որ ապրում է Տուշպա քաղաքում, նուաճեց Կիեհունի երկիրը և Իշտուկունի [1]) քաղաքը։ Շատ հաւանական է, որ Կիեհունի երկիր կոչւում էր ոչ միայն այն լճափնեայ շրջանը, որ այժմ սահմանափակւում է մի կողմից Ելենովկա գիւղով, միւսից Օրդակլուով, այլև լճի հիւսիսային մասը, ուր այժմ գտնւում է Զիբուխլու գիւղը։ Ցաւելով պիտի ասեմ, որ այս արձանագրութիւնը կրող քարի կողքին եղել է նաև մի ուրիշ քար՝ դարձեալ արձանագրութիւնով ծածկուած։ 1860-ական թուերին այս գիւղացիներից մինը կոտրել է այդ քարը և տարել զուռ շինել, փոսացնելով հէնց արձանագրութիւնը կրող մասը։ Ես տեսայ այս զուռը, որ այժմ էլ ընկած է այդ տան գոմում, և նկատեցի զուռի եզրերին սեպաձև արձանագրութեան մնացորդներ։ Ահա այսպէս են վարուել և վարւում մեր գիւղացիները հնագիտական յիշատակարանների հետ... ես դեռ չեմ ուզում թուել այն ահագին գնասը՝ որ պատճառել են նրանք՝ պատահմամբ և կամ գանձ գտնելու տենչով գերեզմաններ պեղելիս։ Բրոնզի դարի դամբաններով շատ հարուստ է Օրդակլուն,

1) Իշտիկունի գիւղը հաւանօրէն գտնուել է Օրդակլուի շրջակայքում. Նիկոլսկի.

մանաւանդ նրա հարաւ—արևելեան կողմը, մօտ կէս կիլոմետր հեռու Քռեր կոչուած քարքարոտ բլուրը, որ լճափից հազիւ 50 մետր հեռու լինի։ Այս ընդարձակ և սաստիկ քարքարոտ բլուրի վրայ կան բազմաթիւ դամբաններ, 2—6 մետր տրամագծով, բայց ոչ աւելի մեծ. սրանցից մի քանի տասնեակ բացել են գիւղացիները՝ երբ կամեցել են սրանց վրայ եղած սալքարերը տանել՝ գործածելու և կամ երբ կարծել են, թէ գանձ կարող է թաղնուած լինել նրանց մէջ։ Ոչ սակաւ դամբաններ կան նաև գիւղի հարաւային կողմում։

67—73. Քռերում ես պեղեցի տասը դամբան. սրանք բոլորն էլ գետնի մակերևոյթից հազիւ 20—30 սանտիմետր բարձր լինէին, և շուրջանակի պատած էին քարերով, որոնց տրամագիծը հասնում էր 3—7 մետրի։ Գրեթէ բոլորն էլ ծածկուած էին երեքական մեծ սալքարերով։ Գերեզմանները քառանկիւնի էին, ուղղուած հիւսիսից հարաւ և պատած անտաշ, մեծ և փոքր քարերով։ Սրանց երկարութիւնը հասնում էր 1,50—2,32 մետրի, լայնութիւնը՝ 1—1,50 մետրի և խորութիւնը՝ 0,70—1,30 մետրի։ Մարդկային կմախքները մեծ մասամբ պրպրզած ձևով էին, իսկ միքանիսը հիւսիսից հարաւ պառկած, աջ կողքի վրայ։ Գտնուած իրերը բրոնզէ էին, միայն մինից դուրս եկաւ բոլորովին փթած երկաթէ մի նիզակ։ Այս տասը դամբաններից առանձնապէս ուշագրաւ են հետևեալ երեքը։

74. Երկրորդ դամբանի տրամագիծն էր 4,25 մետր, բարձրութիւնը 25 սանտիմետր։ Շուրջանակի պատած էր փոքր քարերով, և մէջ տեղում երևում էին սալքարերը։ Գերեզմանն ուղղուած էր հիւսիսից հարաւ, քառանկիւնի էր և պատած անտաշ քարերով։ Երկարութիւնն էր 1,90, լայնութիւնը 1,30 և խորութիւնը՝ 1,10 մետր։

Պեղեցինք հարաւային կողմից, 80 սանտիմետր խորութեան փորելուց յետոյ՝ պատահեցանք 30 սանտիմետր հաստութեան կրի, որը կտրելուց յետ՝ հանեցինք մի քանի մանր և մի մեծ քար, որով և բացուեց գերեզմանի բերանը։ Գերեզմանը 30 սանտիմետրաչափ դատարկ էր, մնացածը լցուած մաքուր, շիկագոյն հողով։ Գրեթէ մէջ տեղում, հիւսիսից հարաւ, միմեանց մօտ և երեսները միմեանց դարձրած պառկած էին մի տղամարդու և մի կնոջ կմախք, որոնց գանգերի (№№ 577 և 586) միջև դրուած էր մի գառան գլուխ և փոքր ինչ ներքև՝ մի պուլիկ։ Տղամարդու մօտ դրուած էր մի բրոնզէ քամանդ (№ 431) և մի բրոնզէ նիզակ, իսկ կնոջ մօտ մի խխունջէ մեծ գինտ և մի պուլիկ՝ մէջը 5 հատ բաղանման պանտալոկներ՝ (№ № 529,531,533,534,536)։

75. Չորրորդ դամբանի տրամագիծն էր 3 մետր, բարձրութիւնը 0,20 մետր, շուրջանակի նոյնպէս պատած էր մանր քարերով։ Կէս մետրաչափ փորելուց յետոյ բացուեց գերեզմանը, հիւսիսից հարաւ ուղղուած և սալքարով ծածկուած։ Սա քառանկիւնի ձև ունէր և պատած էր անտաշ քարով։ Երկարութիւնն էր 1, լայնութիւնը 0,90, և խորութիւնը՝ 0,68 մետր։ Գերեզմանի գրեթէ մէջ տեղում բացուեց մի երեխայի կմախք՝ պըպըղած ձեռով, աջ ձեռին մի բրոնզէ ապարանջան և գանգի մօտ մի փոքրիկ արտասուաց սրուակ (№ 54), առջևում դրուած էր մի գառան կմախք, իսկ կողքերին՝ մի քասա և երկու պուլիկ։

76. Հինգերորդ դամբանի տրամագիծն էր 6,90, բարձրութիւնը 0,30 մետր. շուրջանակի պատած էր քարերով։ 0,70 մետր փորելուց յետոյ բացուեց գերեզմանը՝ դարձեալ հիւսիսից հարաւ ուղղուած և երեք սալքարով ծածկուած։ Երկարութիւնն էր 2,15 լայնութիւնը՝ 1,50, խորութիւնը 1,25 մետր։ Գերեզմանի մէջ տեղում՝ հիւսիսից հարաւ, աջ կողքի վրայ պառկած էր մի տղամարդու կմախք, առջևում մի պուլիկ։ Ոտների մօտ պըպըղած դիրքով կար մի կնոջ (գանգը № 578) և մի երեխայի կմախք, իսկ վերջինիս մօտ մի գառան գլուխ և մի պուլիկ։ Հիւսիսարևմտեան անկիւնում էլ մի տղամարդու կմախք կար՝ պըպըղած դրութեամբ։

Միւս գերեզմաններից դուրս եկան բրոնզէ դաշոյն, ապարանջաններ, և բոժոժներ՝ միանգամայն նման այն բոժոժների, որ այսօր շուշեցի հայ կանայք կրում են իրենց թևերին։

Հոկտեմբերի 6-ին ես անցայ Նոր-Բայազէտ քաղաքը, ուր մնալով մինչև ամսի 16-ը պեղումներ կատարեցի Փաշաքանդի և քաղաքի շրջակայքում։

Փաշաքանդը գտնուում է քաղաքի հարաւ-արևմտեան կողմը, հազիւ 2 կիլոմետր հեռու։ Սրա հիւսիսային կողմում, մի բլրակի վրայ երևում են մի հինաւուրց ամրոցի հիմնապատեր. գիւղի մէջն էլ կայ հայկական հազարամեայ մի եկեղեցի, որ այժմ վերանորոգուած է։

77—108. Այս գիւղի արևմտեան կողմում, մինչև Թեօսա-Մահմատ գիւղը գտնուում են բաւականաչափ դամբաններ՝ շարի շար, իւրաքանչիւր շարքում կան 3—15 դամբան, ուղիղ գծով, մեծ մասամբ հիւսիսից հարաւ, և երբեմն արևելքից արևմուտք դասաւորուած։ Այստեղ ես պեղեցի 15 դամբան, բոլորն էլ վերաբերում էին բրոնզի դարի վերջին. կմախքները բոլորն էլ երկարագլուխ էին, մեծ մասամբ հիւսիսից հարաւ պառկած, կային և պըպըղած դրութեամբ։ Գտնուած բոլոր իրերը բրոնզէ էին և

միայն մի դաշոյն՝ երկաթէ՝ բրոնզէ երախակալով։ Այս դամբաններից առանձնապէս ուշագրաւ են հետևեալները.

109. Առաջին դամբանը գտնուում է դաշտի այն մասում, որ այժմ յայտնի է Աւղընոց անունով, որովհետև հողը աւազային է։ Այս դամբանի տրամագիծն էր 6,40, բարձրութիւնը 1,50 մետր։ Շրջապատուած էր միջակ մեծութեան քարերով և ծածկուած մի մեծ սալքարով։ Գերեզմանն ուղղուած էր հիւսիսից հարաւ, և պատած անտաշ քարերով. երկարութիւնն էր՝ 1,18 մետր, լայնութիւնը՝ 0,85 մետր, իսկ խորութիւնը 1,40 մետր. հետևապէս և եթէ հաշուելու լինինք դամբանի գագաթից մինչև գերեզմանի յատակը, կստանանք 1,50+1,40=2,90 մետր։

Գերեզմանի երեսին նախ երևացին տաւարի ոսկորներ, ապա բացուեց մի երկարագլուխ կմախք՝ (№ 556) հիւսիսից հարաւ պառկած, աջ կողքի վրայ, գլխի տակ մի քար։ Սրա գանգի վերայից դուրս եկաւ մի բրոնզէ շղթայ (№ 101), եռանկիւնի և գանգականման զարդարանքներով, որի նմանը դեռ այժմ էլ գործ են ածում շուշեցի հայ կանայք։ Կմախքի աջ ձեռին էլ կար մի բրոնզէ ապարանջան. կողքին դրուած էր մի պուլիկ և մի քասաւ։ Այս կմախքի ոտների մօտ և արևմտեան կողմում պրպրզած էին մի մի երկարագլուխ կմախքներ, որոնցից առաջնի մօտ գտնուեց մի բրոնզէ դանակ (№ 35), սրա ձեռին կար մի բրոնզէ ապարանջան, և կրծքին մի նոյնպիսի ֆիբուլ։

Գերեզմանից բարձր, նրա արևելեան կողմում, միայն դամբանի շրջանակի մէջ բացուեց նաև մի ուրիշ երկարագլուխ կմախք՝ որի մօտ դրուած էր 4 բրոնզէ ապարանջան, մի բրոնզէ ծալծալած քամար (№ 130), և մի բրոնզէ մախաթ (№ 401)։

110. Երկրորդ դամբանը ուշագրաւ է նրանով, որ երկու գերեզման էր ներփակում։ Սրա տրամագիծը տասն մետր էր, բարձրութիւնը կէս մետր։ Շուրջանակի պատած էր քարերով։ Կէս մետր փորելուց յետ բացուեց երկու սալաքար, որոնց վերցնելուց և մի մետր խորութեան, երկու մետր երկարութեան և մի մետր լայնութեան փորելուց յետ՝ բացուեց մի երկարագլուխ կմախք՝ (№ 555) հիւսիսից հարաւ, աջ կողքի վրայ պառկած, կողքին մի բրոնզէ նետ. երևի զոհել են սրան նոյն գերեզմանում մի մետր աւելի խոր թաղուած, ննջեցեալին։ Վերոյիշեալ կմախքի վրայ գտնուեց միայն մի բրոնզէ ապարանջան։ Ինչպէս ասացի, մի մետրաչափ փորելուց յետոյ, նոյն, անտաշ քարերով պատած գերեզմանում բացինք մի ուրիշ երկարագլուխ կմախք, նոյնպէս հիւսիսից հարաւ, աջ կողքի վրայ պարկած և երեսի հանդէպ մի պուլիկ դրուած։

111. Երրորդ դամբանը ուշագրաւ էր նրանով, որ ըստ երևոյթին, դարձեալ երկու գերեզման էր ներկայացնում, միայն ոչ թէ մինը միւսի վրայ, այլ միմեանց կողքի։ Սրա տրամագիծն էր 9,50 մետր, բարձրութիւնը՝ 1,50 մետր։ Շրջապատուած էր մեծ մեծ քարերով։ Գերեզմանը շատ երկար էր, 3,25 մետր, հիւսիսից հարաւ ուղղուած, 1,60 մետր լայնութեան և 1,80 մետր խորութեան։ Պատած էր անտաշ քարի չորս պատերով և ծածկուած երեք սալքարերով։ Գերեզմանի հարաւային մասում, հիւսիսից հարաւ, աջ կողքի վրայ պարկած էր մի երկարագլուխ կմախք, զարդարուած բրոնզէ մի գօտիով (№ 136), երկու բաղանդման պանդըլոկներով (№ № 541 և 524) մի լայն, նոյնպէս բրոնզէ դաշոյնով (№ 49)։ Մատին կար մի բրոնզէ մատանի և թևին՝ երկու բրոնզէ ապարանջան։ Մօտը դրուած էր մի պուլիկ։ Այս կմախքի ոտների մօտ, երկու կողքին, պըպըղած դրութեամբ կային մի-մի կմախք. նրանցից արևելեան կողմինի վրայ գտնուեց մի բրոնզէ ապարանջան, մօտն էլ երկու պուլիկ։ Արևմտեան կողմի կմախքի վրայ գտնուեց մի բրոնզէ ապարանջան, մի նոյնպիսի մատանի և մի ասեղ։ Սրա մօտ, որ ըստ երևոյթին, կնոջ կմախք էր՝ պառկած էր մի երեխայի կմախք, վզին մի մանեակ, թևին մի ապարանջան և մէջքին մի գօտի, բոլորն էլ բրոնզից։

Գերեզմանի հիւսիսային կողմում, հետևապէս և առաջին պառկած կմախքի ոտքի մօտ պառկած էր նոյնպէս հիւսիսից հարաւ, աջ կողքի վրայ մի երկարագլուխ կմախք, մէջքի մօտ մի երկաթէ դաշոյն, բրոնզէ երախակալով։ Մօտն էլ մի քասա, որ կոտրուած էր։

112. Չորրորդ դամբանը գտնուում է այն նեկրոպոլում, որ Աւղընոցից աւելի հարաւ է, մօտաւորապէս հարիւր մետր, և յայտնի է Փաշօղլի անուամբ։ Սրանք համեմատաբար աւելի մեծ են թէ տրամագծով և թէ բարձրութեամբ։ Սրանք ևս մեծ մասամբ պարունակում են հիւսիսից հարաւ պառկած մի մի կմախք, մի քանի բրոնզէ իրերով և պուլիկներով, միայն մինը տարբերւում էր։ Սրա տրամագիծը 16 մետր էր, բարձրութիւնը 1,50 մետր։ Շրջապատուած էր մեծ-մեծ քարերով։ Գերեզմանը ուղղուած էր արևելքից արևմուտք, պատած էր անտաշ քարերի չորս պատերով և ծածկուած երեք մեծ սալքարերով։ Երկարութիւնն էր երկու, լայնութիւնը 1,50 և խորութիւնը 1,80 մետր։

Սրա մէջ տեղը, արևմուտքից արևելք, մէջքի վրայ, պառկած էր մի կմախք, որի մօտ ոչ մի իր չգտնուեց։ Գերեզմանի երկու ծայրերին միմեանց վրայ կիտուած էին՝ արևելեանում՝ ուրը,

արևմտեանում վեց գանգ, առանց կմախքների, և նոյնիսկ առանց ծնոտների։ Պարզ է, որ կռապաշտական այս դամբանի մէջ քրիստոնեայ ննջեցեալ էր թաղուած, իսկ հին կմախքների գանգերը կուտակուած էին անկիւններում։

Մնացած բոլոր դամբանների մէջ բացուեցան մի-մի կմախք, հիւսիսից հարաւ, աջ կողքի վրայ պարկած, կողքերին մի քանի պուլիկ։ Այսպիսի դամբաններից գտնուեցան դաշոյններ, գօտիներ, ապարանջաններ և բազմաթիւ մատանիներ։

113—122. Միևնոյն ձևի դամբաններ էին նաև այն 10 դամբանները, որ ես պեղեցի քաղաքի հարաւ-արևելեան կողմում, «Մալականի դարի գլուխ» կոչուած տեղում, որ ընկնում է քաղաքի և Ղուլալի գիւղի միջև։ Այս տասը դամբաններից միայն մինը տարբերւում էր։ Սրա տրամագիծն էր 7 մետր, գետնին միանգամայն հաւասար էր և շրջապատի քարերից շատերը չկային։ Գերեզմանը, որ շատ շուտով բացուեց, ծածկուած էր երեք մեծ սալքարերով և ուղղուած էր արևելքից արևմուտք։ Պատած էր անտաշ քարի չորս պատերով։ Երկարութիւնն էր 2,50 մետր, լայնութիւնը 1,50 մետր և խորութիւնը 1,60 մետր։ Գերեզմանի մէջ տեղում, արևելքից արևմուտք պարկած էր մի երկարագլուխ կմախք, (№ 550) մէջքին մի բրոնզէ գօտի և նոյնպիսի դաշոյն. (№ 10), ձեռներին չորս բրոնզէ ապարանջան։ Երկու կողքերին, նոյն, արևելքից արևմուտք ուղղուած պարկած էին երկական կըմախքներ, (№ № 551, 552, և 554) իսկ սրանց սնարի մօտ՝ տրևելա-հարաւային կողմում պըպըզած էր մի ուրիշ կմախք, գանգի (№ 553) վրայ մի պուլիկ դրուած։ Պարկած կմախքների շուրջը դարսուած էին 13 պուլիկ։

Որովհետև այս դամբաններից շատերը գտնուում էին Նոր-Բայազէտից դէպի Բասարգեչար տանող ճանապարհի վրայ, ուստի գրեթէ բոլոր ճանապարհորդները մօտենում էին դամբաններին և հետաքրքրութեամբ դիտելուց և ինձնից մի քանի բացատրութիւններ խնդրելուց յետոյ իրենք էլ պատմում էին թէ այս ինչ ժամանակ արտը վարելիս, կամ մի որև է շինութիւն շինելիս բացուեց մի դամբան, և գտնուեցան այսպիսի իրեր, որոնք նրանք դէն ձգեցին կամ տուին երեխաներին խաղալու, չգիտենալով թէ կարող են պէտք գալ։ Այս գիւղացիներից մինն էլ ասաց, թէ ութ տարի առաջ՝ իրենց գոմի համար հիմ փորելիս բացուեց մի գերեզման, որի միջից բացի բազմաթիւ կմախքներից, դուրս եկաւ և մի քար, որի վրայ գիր կայ և որ ոչ ոք չէ կարողացել այդ գիրը կարդալ։ Իմ հարցման, թէ ո՞ւր է այժմ այդ քարը, նա պատասխանեց, թէ պատի մէջ շարել էին, սակայն մի

ռամ ձգող տիրացու ասաց, թէ ինչաս կը տայ տանը, հանեցէք դէն ձգեցէք, մենք էլ հանեցինք, հիմի դռանը ընկած է։ Ես անմիջապէս գնացի այդ գիւղացու հետ նրա տունը, որ գտնուում է մօտակայ Ղուլալի գիւղում և քարը սայլով բերի Նոր-Բայազէտ, որտեղից և ուղարկեցի Հայոց Ազգագրական ընկերութեան Հնագիտական-ազգագրական թանգարանը։ Այս արձանագրութեան լուսանկարն ու էստամպաժը ուղարկեցի Եւրոպայի հնագէտներին կարդալու։

Հոկտեմբերի 17-ին ես ուղևորուեցայ Կրկին դէպի Ղարանլուղ՝ անցեալ ամառուայ ընթացքում կիսատ թողած «Ջոջ Կոլոն» դամբանի պեղումը աւարտելու։ Բնակավայր ընտրելով Ն. Ատիեաման գիւղը՝ ես կազմեցի բանուորական երկու խումբ, մինը իմ առաջին բանուոր Գէորգի առաջնորդութեամբ ուղարկեցի Ջոջ Կոլոնի վրայ աշխատելու, խստիւ պատուիրելով, որ շարունակեն խաչաձև պեղումը և հէնց որ գերեզմանի նշաններ երևին, անմիջապէս ինձ իմաց տան։ Միւս խումբը ես տարայ Ատիեամանից դէպի Գեօլ, ճանապարհի երկու կողքին գտնուող դամբանները պեղելու։ Այս աշխատանքները տևեցին մինչև նոյեմբերի սկիզբը, երբ տեղացող ձիւնը և սաստիկ ցուրտն ստիպեց ինձ վերադառնալ։

«Ջոջ Կոլոն» դամբանը մենք խաչաձև կտրեցինք, և տեսանք, որ իսկական, միակ գերեզմանը այն էր, որ ամառը մենք բացել էինք։ Այժմ բացուեց այդ գերեզմանի վերայի մեծ-մեծ սալքարերը, որ անկանոն կերպով ձգուած էին այս ու այն կողմ։ Գերեզմանը ձգուում էր հիւսիսից հարաւ, պատերի սալքարերից շատերը ընկած էին գերեզմանի մէջ, ուր բացի ոսկորների կրտորներից՝ ուրիշ ոչինչ չկար։ Ահագին էին սալքարերը 2—3 մետր երկարութեան և մինչև մի մետր լայնութեան, գիւղացիք անմիջապէս եկան տարան՝ գոմերը սալայատակելու համար։

124—160. Ատիեամանում ես պեղեցի 53 դամբան. սրանք բոլորն էլ գլխաւորապէս գտնուում էին Ատիեաման և Գեօլ գիւղերի միջև, այժմեան ամենակարճ ճանապարհի երկու կողմը, մանաւանդ «Դէմեր», այսինքն անջրդի, չոր, կոչուած տեղում, որ լճին շատ մօտ է։ Շնորհիւ այն հանգամանքի, որ այս տեղը, ինչպէս արդէն անունն էլ ցոյց է տալիս, չորային է, կմախքները, ոսկորեայ և նոյն իսկ փայտէ իրերը բաւական լաւ էին մնացել։ Երկաթէ իրեր միմիայն մի-երկու դամբանի միջից դուրս եկան, այն էլ գրեթէ ամբողջովին փթած։ Դամբանները դասաւորուած են խումբ խումբ, իւրաքանչիւրում 4—5 հատ, մեծ մասամբ հիւսիսից հարաւ ձգուած. կային նաև արևելքից արևմուտք շարուած

դամբաններ։ Բոլոր դամբանները պատկանում էին բրոնզի դարի վերջին. մեծ մասամբ բացուում էր մի երկարագլուխ կմախք, հիւսիսից հարաւ, աջ կողքի վրայ պարկած, կողքին մի քանի պուլիկ, իսկ իւր վրայ բրոնզէ մի քանի իր, մանաւանդ ապարանջան և մատանի։ Զանց առնելով մի առ մի նկարագրելու այսպիսի դամբանները, որոնց հանդիպել եմ և միւս նեկրոպոլներում, յիշենք աւելի ուշագրաւները, մանաւանդ այն, ուր գտնուեց նաև իշխանական մի կառք։

161. Առանձին ուշադրութեան արժանի դամբաններից առաջնի տրամագիծն էր 7 մետր. բարձրութիւնը 0,60 մետր, շուրջանակի պատած էր քարերով. գերեզմանն ուղղուած էր արևելքից արևմուտք և ծածկուած 5 մեծ սալքարերով։ Երկարութիւնն էր 1,50, լայնութիւնը մէկ և խորութիւնը՝ 1,20 մետր։ Գերեզմանի մէջ, արևելքից արևմուտք, մէջքի վրայ և ձեռները կողքերին երկարաձգուած պարկած էր մի երկարագլուխ կմախք, որի շուրջը դրուած էին տասերկու մեծ և փոքր կաւէ ամաններ։ Բացի մի վանակատի դանակից, ուրիշ ոչ մի իր չգտնուեց։

162. Երկրորդ դամբանի տրամագիծն էր 10 մետր, բարձրութիւնը 0,50 մետր։ Շուրջանակի նոյնպէս պատած էր քարերով։ Գերեզմանն ուղղուած էր նոյնպէս արևելքից արևմուտք, և անտաշ քարով քառանկիւնի պատած. ծածկուած էր երկու մեծ սալքարերով։ Երկարութիւնն էր 1,90, լայնութիւնը 1,20 և խորութիւնը 1,50 մետր։

Գերեզմանի մէջ տեղում, արևմուտքից արևելք, գլուխը մի կաւէ ամանի մէջ դրուած պարկած էր մէջքի վրայ մի երկարագլուխ կմախք, մօտը ոչ մի իր։ Սրա սնարի մօտ պրպրզած էին երկու կանացի, երկարագլուխ կմախքներ, որոնցից իւրաքանչիւրի թևի վրայից գտնուեց մի-մի բրոնզէ ապարանջան։ Ոտների մօտ, աջ կողմում, կային մի կնոջ և մի երեխայի կմախք, դարձեալ պրպրզած ձևով։ Երեխայի վզին կար մի բրոնզէ ապարանջան։ Ոտների ձախ կողմում պրպրզած էին երեք երկարագլուխ կմախք։ Երկու երկարագլուխ կմախք էլ, դարձեալ պրպրզած ձևով, կային գերեզմանի հարաւային կողմում, պարկած կմախքի աջ կողքին, մինչդեռ ձախ կողքը բոլորովին ազատ էր։

163. Երրորդ դամբանն ուշագրաւ էր նրանով, որ բացուած էր, հին կմախքները ջարդ ու փշուր արած և նրանց տեղը մի քրիստոնեայ ննջեցեալ թաղած՝ արևմուտքից արևելք։ Քրիստոնեաները ոչ միայն հին խաչքարերը, այլև կռապաշտական դամբանները շահագործել են։

164. Չորրորդ դամբանի տրամագիծն էր 3 մետր, բարձրու-

թիւնը 0,20 մետր. գերեզմանն ուղղուած էր հիւսիսից հարաւ, պատած անտաշ քարերով և ծածկուած երկու սալքարով։ Երկարութիւնն էր 1,62, լայնութիւնը 1,10, և խորութիւնը 1,05 մետր։ Գերեզմանի մէջ տեղում պարկած էր մի կմախք, հիւսիսից հարաւ, աջ կողքի վրայ և շուրջը դրուած էին 15 պուլիկ։

165. Հինգերորդ դամբանի տրամագիծն էր 8 մետր, բարձրութիւնը 1,50 մետր։ Շուրջանակի պատած էր քարերով։ Գերեզմանը ուղղուած էր հիւսիսից հարաւ, պատած անտաշ քարերով, և ծածկուած երկու սալքարով։ Երկ. էր 2,10, լայն 1,60 և խորութիւնը՝ 1,20 մետր։ Գերեզմանի մէջ տեղում, հիւսիսից հարաւ, աջ կողքի վրայ պարկած էր մի երկարագլուխ կմախք, մօտը մի բրոնզէ դաշոյն, ոտի և թևի երկական բրոնզէ ապարանջան, շուրջը պըպըզած տասն և ինը երկարագլուխ կմախքներ, որոնցից երկուսը երեխայի։ Երեք կմախք էլ անկանոն կերպով ընկած էին, թևի ոսկորները և գանգը կոտրատուած։ Այս կմախքների վրայից բաւականաչափ ուլունքներ, բրոնզէ մատանիներ և ապարանջաններ գտնուեցան։

166. Վեցերորդ դամբանի տրամագիծն էր 7 մետր, բարձրութիւնը կէս մետր. շուրջանակի պատած էր քարերով. գերեզմանը ուղղուած էր հիւսիսից հարաւ, անտաշ քարով պատած և երկու սալքարով ծածկուած։ Երկարութիւնն էր 2 մետր, լայնութիւնը 1,20 մետր և խորութիւնը 1 մետր։ Գերեզմանի մէջ տեղը, հիւսիսից հարաւ, աջ կողքին պարկած էր մի երկարագլուխ կմախք, որի մօտ, գերեզմանի արևելեան կողմում, պըպըզած էին երկու կանացի երկարագլուխ կմախքներ, որոնց մօտից գտնուեց մի-մի բրոնզէ մատանի։ Արևմտեան կողմն էլ արևմուտքից արևելք՝ պարկած էր մի երեխայի կմախք՝ մօտը տաւարի ոսկորներ։ Ըստ երևոյթին այս երեխայի կմախքը, որ քրիստոնէի պիտի լինի, թաղուած է եղել յետոյ՝ կռապաշտական դամբանի մի անկիւնում, ուր տաւարի ոսկորներն են եղել, որոնք և մնացել են այնպէս ընկած։

167. Եօթերորդ դամբանի տրամագիծն էր 5 մետր, բարձրութիւնը 0,60 մետր. գերեզմանի ուղղութիւնն էր հիւսիսից հարաւ, անտաշ քարով պատած և երկու սալքարով ծածկուած։ Երկարութիւնն էր 1,50, լայն. 1,20 և խորութիւնը 1 մետր։ Գերեզմանի մէջ տեղում, հիւսիսից հարաւ պարկած էր մի երկարագլուխ կմախք, կողքին մի բրոնզէ դաշոյն (№ 43)։ Այս կմախքի ոտների մօտ պըպըզած էր մի կանացի կմախք՝ ձեռին մի բրոնզէ ապարանջան։

168. Ութերորդ դամբանի տրամագիծն էր 7 մետր, բարձրու-

թիւնը՝ 2 մետր. գագաթը տափարակ էր, և շուրջանակի պատած քարերով։ Գերեզմանն ուղղուած էր հիւսիսից հարաւ, պատած անտաշ քարերով և ծածկուած երկու մեծ սալքարով։ Երկարութիւնն էր 2,30, լայնութիւնը՝ 1,70, խորութիւնը՝ 1,30 մետր։ Գերեզմանի մէջ տեղում, հիւսիսից հարաւ, աջ կողքի վրայ պարկած էր մի երկարագլուխ կմախք, որի մօտից գտնուեց մի բրոնզէ գօտի, երկու բրոնզէ ապարանջան և մի բրոնզէ մանեակ։ Այս կմախքի մօտ գլխի վրայ ընկած էր մի նոյնպէս երկարագլուխ, կանացի կմախք, որի մօտ գտնուեց երկու բրոնզէ բաղանման պանդըլոկ և մի բոժոժ (№ 473)։

169. Իններորդ դամբանը սովորական դամբաններից էր. մի երկարագլուխ կմախք՝ հիւսիսից հարաւ, աջ կողքին պարկած, միայն թէ մէջքին ունէր մի նեղ, բրոնզէ գօտի և մի դաշոյն (№ 45), թեին մի բրոնզէ ապարանջան և մատին՝ մի մատանի։

170. Տասերորդ դամբանի տրամագիծն էր 13, բարձրութիւնը 1,50 մետր, հարթ գագաթով և շուրջանակի մեծ-մեծ քարերով պատած։ Գերեզմանը ուղղուած էր հիւսիսից հարաւ, պատած անտաշ քարերով և ծածկուած երկու մեծ սալքարով։ Երկարութիւնն էր 2,40, լայնութիւնը 1,80 և խորութիւնը՝ 2 մետր։ Գերեզմանի մէջ տեղում, երեսները միմեանց դարձրած, հիւսիսից հարաւ պարկած էին երկու կմախք, որոնց մօտից գտնուեց մի բրոնզէ փոքրիկ (№ 48) և երկու վանակատի դանակներ։ Սրանց սնարի մօտ կար մի գորշուկի կմախք։ Գերեզմանի արևելեան կողմում պըպըզած ձևով կար մի երկարագլուխ մարդու կմախք, որի մօտ պարկած դրութեամբ գտնուում էր մի ձիու և մի գորշուկի կմախք, ինչպէս մի հորթի գլուխ։

170. Տասն և մէկերորդ դամբանի տրամագիծն էր 10,50, բարձրութիւնը 1,50 մետր։ Գագաթը ծածկուած էր կարկառով։ Գերեզմանն ուղղուած էր արևելքից արևմուտք, պատած էր անտաշ մեծ քարերով և ծածկուած երկու սալքարով։ Երկարութիւնն էր 2, լայնութիւնը 1,30 և խորութիւնը 2 մետր։ Գերեզմանի մէջ տեղում, հիւսիսից հարաւ, երեսները միմեանց դարձրած, պարկած էին մի տղամարդու և մի կնոջ կմախք։ Սրանց ոտների մօտ, ուրեմն հարաւային կողմում, պըպըզած էր մի կնոջ կմախք։ Առաջինի, պարկած տղամարդու, կողքից դուրս եկաւ մի բրոնզէ դաշոյն (№ 53), իսկ կնոջ վրայից՝ մի բրոնզէ ապարանջան, մի լայն մատանի և բաւականաչափ ուլունքներ։ Կային նաև ձկան և գառան ոսկորներ։

171. Տասներկուերորդ դամբանի տրամագիծն էր 13 և բարձրութիւնը 1,50 մետր։ Շուրջը պատած էր քարերով։ Գերեզ-

մանն ուղղուած էր հիւսիսից հարաւ, պատած անտաշ քարերով և ծածկուած երեք սալքարով։ Գերեզմանի հիւսիս-արևմտեան անկիւնում պլպլըղած էր մի երկարագլուխ մարդու կմախք, մէջքին մի դաշոյն (№ 38), թևին՝ ապարանջան և կողքին՝ երկու պուլիկ։ Գերեզմանի հարաւային կողմում միմեանց վրայ թափուած էին երեք մարդու կմախք, որոնց գանգերը ներքևում էին, ոտները վերևպարզ է, որ վերևից իրենք իրենց կամ ուրիշները ձգել էին սրանց։ Աւելի հաւանական է, որ սրանց բռնի ձգած լինէին, որովհետև սրանցից մինի կմախքի միջից գտնուեց մի բրոնզէ նետ։

172. Տասներեքերորդ դամբանի տրամագիծն էր 12 մետր, բարձրութիւն 2,50 մետր։ Շուրջանակի պատած էր մեծ-մեծ քարերով, և ամբողջովին ծածկուած կարկառով։ Գերեզմանը ուղղուած էր արևելքից արևմուտք, պատած մեծ, անտաշ քարերով և ծածկուած երեք սալքարերով։ Երկարութիւնն էր 3, լայնութիւնը 1,50 և խորութիւնը 1,20 մետր։ Գերեզմանի մէջ տեղում պարկած էին մի տղամարդու և կնոջ երկարագլուխ կմախքներ, երեսները միմեանց դարձրած և իրենց մէջ տեղում ունենալով մի երեխայի կմախք։ Կնոջ ձեռներին և ոտներին կային բրոնզէ ապարանջաններ, իսկ կողքին մի բաղանման պանտըլոկ (№ 527)։ Սրանց աջ կողմում, հետևապէս գերեզմանի արևելեան մասում, պլպլըղած ձևով կար մի մարդու կմախք, իսկ արևմտեան կողմում անկանոն կերպով, միմեանց վրայ թափուած էին երեք նոյնպիսի կմախքներ։ Մի կմախք էլ հիւսիսային կողմում, պարկած զոյգի սնարի մօտ էր ընկած։ Երեք պուլիկ, տաւարի ոսկորներով և հողով լի դըրուածէին նոյն, պարկած զոյգի ոտների մօտ։

173. Տասնևչորսերորդ դամբանի տրամագիծն էր 10,50, իսկ բարձրութիւնը՝ 1,50 մետր։ Նոյնպէս պատած էր մեծ-մեծ քարերով։ Գերեզմանը ուղղուած էր հիւսիսից հարաւ, պատած անտաշ քարով և ծածկուած երկու մեծ սալքարով։ Երկարութիւնն էր 2, լայնութիւնը 1,90 և խորութիւնը՝ 1,30 մետր։

Գերեզմանի մէջ տեղում, հիւսիսից հարաւ, աջ կողքի վրայ պարկած էր մի տղամարդու երկարագլուխ կմախք, որի աջ կողմում պլպլըղած էր մի ուրիշ, կանացի կմախք։ Պարկած կմախքի ոտներին կար մի-մի բրոնզէ մեծ ապարանջան, իսկ պլպլըղած կմախքի մէջքին բրոնզէ մի գօտի և թևի նոյնպիսի երկու ապարանջան։

176. Տասնևհինգերորդ դամբանի տրամագիծն էր 17 մետր, բարձրութիւնը 0,60 մետր։ Գերեզմանի երկարութիւնն էր 2,40, լայնութիւնը մէկ ու կէս և խորութիւնը 2 մետր. ուղղուած էր արևելքից արևմուտք, և ծածկուած երկու մեծ սալքարով։ Գերեզ-

մանի մէջ տեղում, հիւսիսից հարաւ պարկած էր մի երկարագըլուխ կմախք, որի աջ կողքին պըպըղած դրութեամբ կային մի կնոջ և մի երեխայի կմախքներ, մօտը մի պուլիկ դրուած։ Մի քիչ հեռու, պարկած կմախքի ոտների մօտ, միմեանց վրայ ընկած էին երկու կմախք, որոնց մօտից գտնուեցան մի բրոնզէ և մի ոսկորէ նետ։

175. Տասնևվեցերորդ դամբանի տրամագիծն էր 7 մետր, բարձրութիւնը 70 սանտիմետր։ Գերեզմանը ուղղուած էր հիւսիսից հարաւ, և ծածկուած երկու մեծ սալքարով. երկարութիւնն էր 2 մետր, լայնութիւնը 1,50 մետր և խորութիւնը 1,80 մետր։ Գերեզմանի մէջ տեղում, երեսները միմեանց դարձրած պարկած էին մի տղամարդու և մի կնոջ կմախք, (№№ 579 և 580 գանգերը) որոնց սնարի մօտ դրուած էր մի երեխայի կմախք։ Տղամարդու կմախքի մօտից գտնուեց մի բրոնզէ դաշոյն, (№ 52), իսկ կնոջ մօտից երկու բրոնզէ ապարանջան և ուլունքներ։

176. Ժէ. դամբանը չափազանց հետաքրքրական էր։ Սրա տրամագիծն էր 18 մետր, իսկ բարձրութիւնը կէս մետր. շուրջանակի պատած էր մանր քարերով։ Հողակոյտն արդէն քանդուած էր։ Գերեզմանը քառանկիւնի էր, ուղղուած արևելքից արևմուտք, չորս կողմը անտաշ, մեծ-մեծ քարերով պատ քաշած և իւրաքանչիւր անկիւնում մի փայտէ սիւն կանգնեցրած։ Երկարութիւնը 3,20 մետր էր, լայնութիւնը 2,50 մետր և խորութիւնը 3,30 մետր։ Ամբողջովին լցուած էր հողով և ծածկուած երեք ահագին սալքարերով, որոնցից միայն մինը մեծ դժուարութիւններով մենք կարողացանք վերցնել։ Երեք կողմի պատերի քարերը համեմատաբար մեծ էին, իսկ չորրորդինը, արևելեանը, փոքր և ոչ այնքան կանոնաւոր կերպով դարսուած, այնպէս որ կարելի է ենթադրել, որ ննջեցեալներին թաղելուց յետոյ է հապճեպով շարուած։

Այս գերեզմանի մէջ, երկարութեամբ, գտնուեց մի, ամբողջովին փայտից շինուած, սայլ (№ 895). որի սունին ծանրութիւնից կոտրուել էր և առեղները վերև էին բարձրացել։ Սրա վրայ պարկած էր մի երկարագլուխ կմախք, (№ 583) աջ կողքին, ոտները փոքր ինչ յետ ծալած և երեսը դէպի հալաւ դարձրած։ Սրա գանգի վրայ կար մի վարսակալ (№ 92), մէջքին մի լայն գօտի՝ վերան մի մեծ և մի փոքր դաշոյն (№№ 95 և 98) և մի դանակ (№ 99), աջ ձեռին մի ապարանջան (№ 91) և մի մատանի (№ 90)։ Կողքին դրուած էր մի գայիսոնի գլուխ (№ 96), իսկ աջ ձեռին ունէր միերկժանի (№ 100)։ Այս բոլոր, ինչպէս և այս դամբանի մէջ գտնուած միւս իրերը բրոնզէ էին և երկաթի ոչ մի հետք չկար

Այս իշխանական կմախքի շուրջը անկանոն կերպով ընկած էին 13 մարդկային կմախքներ, որոնցից շատերի գանգերը (№ № 581, 582, 584, 585) ներքևումն էին, իսկ ոտները վերևում. մի քանիսի ոսկորներն էլ կոտրատուած էին, պարզ է՝ որ վերևից ձըգուած էին գերեզմանի մէջ։ Այս տասերեք կմախքների վրայից գտնուեցան, միայն 30 մատանի, մի բրոնզէ օղ, իսկ մի կոտրուած բաղկոսկրի վրայ երեք բրոնզէ ապարանջան։ Մասամբ սայլի վրայ, մասամբ էլ նրա շուրջը շարուած էին 18 մեծ և փոքր կաւէ ամաններ։

Սայլի գլխի մօտ, ուրեմն գերեզմանի արևմտեան կողմում, բացուեցան չորս եզան կմախքներ, որոնք հետևապէս՝ լծուած են եղել այս դիակառքին։ Սայլի լծի մօտ, երեսի վրայ ընկած էր մի երկարագլուխ մարդու կմախք, որ հաւանօրէն սայլապանը կարող էր լինել։ Լծի մէջ տեղում ամրացած էր մի սնամէջ, բրոնզէ այծեամ, (№ 101) երեք գնդակիկներով, որ շարժուելիս զընգզընգում է։

Սայլի հիւսիսային կողը, անիւի մօտ գտնուեց մի վարպի դանգ (№ 894) և նրա կմախքի մի քանի մասեր։

Սայլի մանրամասն նկարագրութիւնը զետեղում եմ գըտնուած բոլոր իրերի նկարագրութեան բաժնում։

Ն. Ատիեամանից անցայ Գեօլ, ուր ոչ միայն գիւղի շրջակայքում, այլ նոյնիսկ կենտրոնում, գիւղական դատարանի շինութեան հանդէպ կան բաւականաչափ դամբաններ։ Գիւղացիներն իրենց զարմանքն արտայայտելով, որ «այդպիսի չնչին բաների» վրայ ես ուշադրութիւն եմ դարձնում և դրամ ծախսում, սկսեցին պատմել, թէ որքան դամբաններ էին բացուել դաշտերը վարելիս կամ շինութեան համար քար հանելիս։ Գտնուածիրերի մեծ մասը կոտրել, ոչնչացրել էին, որովհետև մի որևէ բանի չէին կարողացել գործածել։ Մի գիւղացի էլ պատմեց հետեալը. «Վար անելիս խոփը մի քարի դէմ ընկաւ, հանեցինք քարը և տեսանք, որ նրա տակ մի կարաս կայ, մէջը մի մեծ մարդու կմախք։ Ոսկորները դուրս տուինք, յուսալով որ մի բան կը գտնենք կարասի մէջ, սակայն ոչինչ չկար, բացի մի պուլիկից, որ դէն ձգեցինք։ Կուզէինք կարասն էլ կոտրել, բայց լաւն էր, հանեցինք բերինք տուն, մեր կանայք լուացին և մէջը թուռչի դրին»։ Ես անմիջապէս գնացի այդ տունը, գտնեցի կարասը և ուղարկեցի Հայոց Ազգագրական ընկերութեան Հնագիտական-Ազգագրական թանգարանը (№ 896)։ Այս կարասը միանգամայն նման է այն կարասներին, որ ես գտայ Նորագուղ և Վերին Ատիեաման գիւղերում։ Սրանք իրենց

ձևով գրեթէ չեն տարբերուում այժմեան հայ գեղջկուհիների ձեռքով շինուած կարասներից։

Ես շատ էի ցանկանում անցնել Մեծ-Մաղրա գիւղը, և պեղել սրա մօտ եղած երեք, բաւական մեծ դամբանները, ինչպէս և անցնել Նադեժդինօ գիւղը, Սևանայ լճի հիւսիսային ափը, և պեղել Ադա-Թափա թերակղզու վրայ գտնուած դամբանները, սակայն արդէն նոյեմբերի սկիզբն լինելով՝ ձիւնը տեղում էր և ցուրտը ստիպում ընդհատել աշխատանքները։

Ես վերադարձայ Թիֆլիս՝ փափագելով միջոցներ գտնել առաջիկայ գարնանը պեղելու Ղրու-Բուլաղ գիւղում գտնուած երկու հսկայական դամբանները, որոնք գտնուում են գիւղի արևմտահարաւային կողմում, հազիւ կէս կիլոմետր հեռու։ Սրանք միմեանց կից են, մեծը փոքր ինչ երկայնաւոյն է, փոքրը կոլոր։ Մեծի երկարութիւնը մօտաւորապէս կը լինի 150 մետր, լայնութիւնը մօտ 30 մետր և բարձրութիւնը այժմ մօտ 25 մետր։ Գագաթը հարթ է և հիւսիսային ծայրում կայ մի հայկական խաչաքար՝ ջնջուած տապանագրով։ Շուրջանակի պատած է մեծ-մեծ քարերով, որոնցից շատերը գիւղացիներն արդէն տարել են։ Շինութիւնների համար հող տանելու նպատակով գիւղացիները փորել են այս դամբանի հիւսիսային կողմը և մի քանի պուլիկ, ուլունքներ գտել։